ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ ԱՐՂ/452-2021

ք.Արտաշատ

„23„ 12 2021թ.

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 4-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 19-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով հաստատված Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին 2021 թվականի դեկտեմբեր ամսվա ընթացքում հատուկ առաջադրանքներն և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար պարգևատրել մարզպետի խորհրդականներին և օգնականներին, մարզպետի տեղակալի օգնականին՝ համաձայն հավելվածի:

2.Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարողին՝ կատարել վճարում:

Восстановимая подпись

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ